

զիս՝ որ այսպէս յուսահատած չթողունք . այլ մէկ ճար մը մենք ալ մեր կողմանէ մտածենք , որ Բստուած ալ մեր ջանքը տեսնելով օգնէ մեզի :

Եւ այն ատենը դարձայ ըսի իրեն . Բարեկամ, մենք ինչ ճար կրնանք ընել . ինչ որ ըսենք՝ ծուռ մտքով կ'առնեն ու զմեզ կ'անարգեն : Հիմա այն օրուան հասանք՝ որ կարծեմ պէտք պիտի ըլլայ ոտքի փոխնիս ալ թօթուել ու քաշուիլ մեր Տրդատ թագաւորին պէս ու յառանձնուէ ազգին թշուառութիւնը ողբալ :

ԲԱՐ . Զէ այդպէս , սիրելի , ինչ որ ալ ըլլայ ազգերնիս է , պէտք է աշխատիլ վրան՝ քանի որ շունչը վրանիս է : Ի՞նչ որ ուրիշ բան մ'ալ չէս կրնար ընելու , գոնէ սա հիմակուան ինծի հետ եղած խօսակցութիւնը հրատարակենք , տեսնենք ինչ ազդեցութիւն կ'ընէ կարգացողներուն : — Կարծես որ այսպէս խօսակցութիւններէն բարիք մը կարենայ պիտի ըլլալ :

ԲԱՐ . Ի՛նչ ըսել է . ինչպէս դու ալ առաջ ըսիր , ազգերնուս մէջ՝ խիստ շատերը բարեսիրտ են , չգիտնալով կը սխալին : Բ՛հա ես ալ այդ ծուռ կարծեաց վրայ եի . բայց հիմա հասկըւայ , և կը փափաքիմ որ ճշմարիտ լուսաւորութիւն ըլլայ ազգերնուս մէջ . ո՞ր գիտէ այս խօսակցութիւնիս սրճափ ինծի պէս մարդկանց ալ սիրտը կը շարժէ : Եւ ես կարծեմ թէ ով որ առանց կրքի մտադրութե լսէ այս համառօտ խօսակցութիւնիս , օգուտ կրնայ քաղել :

— Եթէ այդպէս յոյս ունիս , շատ լաւ . թէ և օգուտ մը չըլլայ՝ փնաս մ'ալ չըկայ . շատ շատ քիչ մը զիս պիտի նախատեն . մենք արդէն ազգերնուս սիրոյն համար նախատուիլը յանձն առած ենք . և անիրաւ նախատինք լսելով ալ մեզի փնաս մը չէ եղած :

Ուրեմն հիմա ով սիրելի ընթերցող , եթէ իրաւունք տաս այս մեր տրամախօսութեանը , յայտնի է որ սրտիդ մէջ կիրք չկայ . ուստի մեզի հետ ազգերնուս խեղճութիւնը վրայ ցաւելով , եթէ ձեռքդ կու գայ՝ ազգին ճշմարիտ լուսաւորութեանը օգնելու ջանա : Իսկ եթէ

այս խորհրդածութիւնները քեզի աւելորդ երեւնան , և կրքով գրած համարիս , քեզի ուրիշ բան չեմ ըսեր , միայն թէ վախցիր որ դու ալ կրքի մէջ չըլլաս . և քանի որ ատանկ կիրք մը գտնուի վրադ՝ ազգին օգուտ մը չէս կրնար ընել . բայց ազգին սիրոյն համար գոնէ զգուշացիր փնաս ընելէն :

Հ . Պ . Մ .

ԲԱՐՈՅԱԿԱՆ ԱՌԱՆԵՐ

ԴԻՈՆԻՍԻՈՍ բռնաւորն հարցուց Արիստիպլոս փիլիսոփային . Ինչո՞ւ փիլիսոփայք մեծամեծաց դռներ կը պառտին , ու մեծամեծք փիլիսոփայից դռներ չեն երթար : — Պատասխանեց Արիստիպլոս . Վասն զի փիլիսոփայք կը ճանչնան իրենց կարօտութիւնն :

ՍՏՈՅԻ մամստասիրութիւնն է ճանչնալ մարդկանց տգիտութիւնը :

ՆԻԿՈՒ

ԻՄԵՍՏՈՒՆՆ ոչ երբեք առանձին կը մնայ :

ԹԷՈՓՐԱՍՏ

ՏԳԻՏՈՒԹԵԱՆ խաւարն կը պատէ այս լուսաւորեալ դարուս մէջ , ինչու որ՝ գող ու մուրացկան գրիչներ շատցեր են :

ՇԱԴՈՊՐԻԱՆ

ՊԼԱՏՈՆ ասէ . Ամենայն մակացութիւն որոշեալ յարգարութենէ և յայլոց առաքինութեց , խաբէութիւն և ոչ իմաստութիւն տալի :

ՍՈԳՐԱՏԷՍ ասէ . որպէս զմեզուն տեսանեմք՝ ի վերայ ամենայն ծաղկանց նստեալ , սակայն զափտանին առնուլ , նոյնպէս ամենայն իրաց պարտ է հմտանալ , սակայն զօգտակարն առնուլ :